ՆՈՐ-ԴԱՐ

№ 12 Վ.ԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 31 Յունվարի **1889** Երեքշաբթի 31 Յունվարի Վ.ԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 12

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 р., համարը 5 կոպեկ։ Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների տողին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԸ

Թիֆլիսում

ՆԵՐԿԱՅ 1889 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Վեցերորդ տարի)

Հրատարակւում է նոյն ծրագրով և ծրագրով

Խմբագրութիւնը ստանում է և սեպհական հեռագիրներ

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, համարը 5 կոպ.

Եւրոպայի, Թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

Թիֆլիսում բաժանորդ են գրւում միմիայն «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Բարոնսկայա փողոցում, պոստ-հեռագրատան դէմ, տուն № 12.

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարիքը հնարագէտ է։

«Նոր-Դար»-ի հեռագիրները։

Քրոնիկոն. — Լուրեր Կովկասի խորհրդածութիւնները ժողովրդի կեանքից ժողովրդի համար։ Մատենախօսութիւն (շարուն.):

Թղթակցութիւններ. — Նուխի. Ախալցխա։

Քաղաքական. — Քաղաքական լուրեր։

Խառն լուրեր.

Երեկոյեան հեռագիրներ։

Տեղեկատու։

Յայտարարութիւններ.

ԿԱՐԻՔԸ ՀՆԱՐԱԳԷՏ Է

Թէ մարդս գյութեան կարի մէջ կարիքից հնչակի հնարքների է դիմում իր և իր հարազատների գոյութիւնը պահպանելու համար—դրա մի օրինակը մենք տեսնում ենք քաղաքիս Յովնանեան-Մարիամեան դպրոցում ունի ունեցած մի դէպքից։

Յայտնում է, որ այդ դպրոցի աշակերտներից մէկը պատկանում է միւսին աղքատի մի չքաւոր ընտանիքի. ընտանիքի գլուխը՝ անտուն հայր ունի 5—6 զաւակներ. որոնց մի կարգաւորաց մի կերպ պահպանել իր զաւակների գոյութիւնը, իր զաւակներից մէկին տալիս է Յովնանեան-Մարիամեան դպրոցը էր, ինչ ասել, խեղճ հայրը, իր զաւակներից մէկին այդ դպրոցը տալով, իսկ իր հոգսերի մէկ—8-րդ մասից ազատուած կը լինի. իր աղջիկը կրտսեր հոգածու, դառագրքեր և որ դիմաւորն է, հաց ու դասեր (թէպէտ ալի դասեր), այդ էլ բաւ է, փառք Աստուծոյ։

Այս օրերս փոխանակեցաւ այդ աղքատ անտուն հայրը և—թողելու փող չկար. նոյն Յովնանեան դպրոցի աշակերտներն և աշակերտուհիները հանգանակել են մի փոքրիկ գումար, որպէսզի դպրոցի աղքատ անտուն ուսեի աղքատ հօր թաղման ծախքը հոգացուի։

Միմիայն Յովնանեան դպրոցը չէ, որ հայ աշակերտը կամ աշակերտուհին աղքատ է, լինում և շատ անգամ հայի կարօտ աղքատ ծնողներ բազմաթիւ զաւակներով շատ կան, գիւղական դրպրոցից սկսած մինչև համալսարանը աղքատութիւնը, կարիքը անբաժան են հայ պատանուց, հայ ուսանողից... Սա ցաւալի իրողութիւն է. բայց մեր դպրոցները չեն կարող աղքատանոցներ լինել, մեր դպրոցներում միայն գիտ-կարգաւոր են սովորեցնում և սպրսական կրթութիւն տալիս, ուրիշ նպատակ չունեն նրանք և չեն էլ կարող ունենալ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՎԻԵՆՆԱ, 27 յունվարի.—Փետրվարի 11-ին (Ն. Տ.) կայսրը և կայսրուհին կուղևորեն Պեշտ, ուր ուսանողների խումբը նոցին ծննդեան 25-ամեակի առթիւ… Նոցին մեծութիւններին պատրաստւում է սուգի զգեստով դիմաւորելու։

Այստեղի թերթերին Բերլինից հաղորդում են, որ Բիսմարկի և ազգային-ազատամիտ կուսակցութեան մի մասին, նոյնպէս Բիսմարկի և գրաֆ Վալդերզէէի միջև յարաբերութիւնները լարուել են։

ՀՌՈՄ.—Այսօր ճաշից յետոյ, անգործ մնացած բանուորների մի խումբ փայտերով և զանազան գործիներով զինուած, սկսաւ փողոցները թափառել։ Նրանք կոտրատեցին մագազինների ապակիները և ջարդեցին փողոցների լապտերները։ Նոյնպիսի անկարգութիւններ տեղի ունեցան նաև երէկ։ Հումբերտ թագաւորը Կրիսպիից խստիւ պահանջեց, որ նա միջոց գտնէ բանուորներին աշխատանք գտնելու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունվարի.—«С. Пет. Вѣд.»-ն հաղորդում է, որ աւղանական Էմիր Աբդուրահման խանը հալածելով ռուսական սահմաններում ապաստան գտած Իսահակ-խանին, ռուսաց սահմանի խիստ մօտ է բերել 20—30,000 զօրք և մինչև անգամ, ինչպէս լսւում է, Բուխարայի Էմիրին հրաւէր է կարդացել միասին գործելու Ռուսիայի դէմ։ Բուխարան անպայման մերժել է այդ առաջարկը. բայց աւղանցիները շարունակում են մեծ խումբերով հաւաքուել ռուսական սահմանների մօտ։ Արտաքին գործերի մինիստրութիւնն այդ բանի վրայ դարձրել է Անգլիայի ուշադրութիւնը, որովհետև երկուսի շահերն էլ պահանջում է, որ Աբդուրահման խանին չթողլ տան անհաշիւ քայլ անելու, որոնք կարող են Ռուսիային ստիպել խիստ միջոցների դիմելու։

«Нов. Вр.»-ն հաղորդում է, որ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը կուղևորի Հարաւային Ռուսիա, յետոյ կը գնայ Վոլգա գետի վրայ, և այնուհետև Մարիինեան ջրային ճանապարհով կը վերադառնայ Պետերբուրգ։

Ֆինանսների մինիստրութեան արժէքների (տարիֆների) բաժինը (դեպարտամէնտը) վերջնականապէս կազմակերպուած է արդէն։

ՄՕՍԿՎԱ.—Այսօր հանդիսաւոր կերպով տօնուեց Ա. Ա. Շենշինի (Ֆէտ) գրականական գործունէութեան յիսունամեակը։ Յոբելեարին ուղերձներ մատուցին ռուս գրականութեան սիրողների ընկերութեան, Պետերբուրգի գրագէտների և ծառանգ Նիկոլայի լիցէյի կողմից և բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ են ուղարկուած։ Պատգամաւորութեան ընդունելութեան միջոցին, այդ օրուայ առթիւ Մալօշկինի հեղինակած Կանտատը նուագեցին։ Բոլոր ներկայ եղողներին յոբելեարը բաժանեց այդ օրուայ առթիւ իւր գրած «Իմ մուսայիս յիսուն ամեակի առթիւ» ոտանաւորը։

ՀՌՈՄ.—Բոլոր հրապարակներն ու խաչմաբանները հեծելազօրներով են բռնուած։ Քաղաքը յուզուած է. մագազինները փակուած են։ «De-Freri» շատրուանի մօտ բանուորների և ոստիկանութեան միջև կռիւ պատահեցաւ։ Կորսոի գծի վրայ երթևեկութիւնը կըտրուած է։

(Երեկոյեան հեռագիրները չորրորդ երեսում)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

27 Յունվարի 1889 թ.

Լոնդոն 94 ր. 93,45 ր., 93,90 ր.

Համբուրգ 46,10 ր., 46 ր.

Պարիզ 37,10 ր., 37 ր.

Պօլուիմպերիալ	7	ր. 51	կ.	առկ.
Մաքս. կուպոն	150	ր. 50	կ.	առկ.
Արծաթ	1	ր. 13	կ.	առկ.
Բօրսային դին	6	և 7¹/₄ %.		
Պետական բանկի 5% տոմ.				
1-ին շրջանի	98	ր. 62	կ.	գն.
2-րդ	98	ր. 37	կ.	գն.
3-րդ	98	ր. 37	կ.	առկ.
4-րդ	98	ր. 37	կ.	գն.
5-րդ	98	ր. 37	կ.	գն.
Ոսկէ փոխառութիւն	141	ր. 50	կ.	առկ.
4% տոմսեր	83	ր. 37	կ.	առկ.
100 և 1000 ր. արևելեան փոխառութեան 5% տոմսեր,				
1-ին շրջանի	99	ր. —	կ.	առկ.
2-րդ	99	ր. —	կ.	առկ.
3-րդ	98	ր. 87	կ.	առկ.
Առաջին 5% ներքին փոխառութեան տոմսեր	269	ր. 25	կ.	առկ.
2-րդ	250	ր. 50	կ.	առկ.
5¹/₂% բընտեր	102	ր. —	կ.	գն.
Ոսկէ բընտ	169	ր. 50	կ.	առկ.
Թիֆ. քաղ. փոխէ բնկեր. օբլիգ.	—	ր. —	կ.	գն.
Պետական բանկի				
Երկաթուղու բընտ	—	ր. —	կ.	գն.
Ազնուակ. հող. բան.				
կն գրաւաթղթեր	—	ր. —	կ.	գն.

Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը հաստատուն է։

ՔՐՈՆԻԿՈՆ

Մեզ հաղորդում են, որ կուսանաց վանքի միայնակ բարեկամ կոյս Հռիփսիմէ Թայիրեանցը Վեհ. Կաթողիկոսից ստացել է կոնդակ, որով նրան թոյլ է տրւում իւր ծախքով շինելու Էջմիածնի մայր տաճարի առաջ դուռը։

Այս առթիւ պէտք է ասենք, որ մայր տաճարի թէ ատաղձը և թէ միւս դռների նախագիծը գեղեցիկ ճաշակով և տոկունութեամբ պահպանելով պատրաստել է երևելի ճարտարապետ Մկրտիչ Դիրդ...

Ռուսաց աշխարհագրական ընկերութեան անդամ Կուզնեցովը յայտարարել է, որ առաջ մտադիր է Կովկաս ուղևորելու կենդանաբանական նպատակով, իսկ պ. Նալչենկօն, «Нов.»-ի աշխատակից, յայտնել է, որ Անդրկասպեան երկիրներն է ուղևորւում։

Բաքուից պ. Մկրտիչ Մուսայէլեան Տէրհայրապետեանը «Նոր-Դար»-ին բաժանորդ գրուելով, «Նոր-Դար»-ի մի օրինակ նուիրել է Նուխու մօտ Քիշ գիւղի Եղիշէ Առաքել վանքին. պ. Առաքել Տէրաստուածատուրեանը «Նոր-Դար»-ի մի օրինակ նուիրել է Գանձակի մօտ ս. Թարգմանչաց վանքին, մի օրինակ էլ Նուխու Ծաղկոց եկեղեցու Պ. Գրիգոր Դիլգարեանը մի օրինակ նուիրել է Նուխու Աւետ Ամիրեանի գիւղի դպրոցին և մի օրինակ էլ Բէգլարբէկովի դըպրոցին։

ՄՕՍԿՎԱՅԻՑ. — Այս օրերս կայացաւ Լազարեան ճեմարանի դահլիճում աշակերտների երգով նուագահանդէսը Դանիէլեան և համերգ աջողութիւն ունեցաւ. մօտ 350 րուբլու ստացւել էր ծախսուած։ Ի միջի այլոց ստարականներից ներկայ էին ռուս գրագէտ Նեմիրովիչ-Դանչենկօ և Լարոշ քաղաքի երաժշտական կրիտիկոսը։

Անցեալ երեկոյեան ժամը 7¹/₂-ին Վորոնցովեան փողոցում պ. Վասիլ Զմոյեանի նոր կառուցած շինութեան երկրորդական ֆլիգելը սարսափելի ձայնով փլեց։ Շինութիւնը բոլորովին պատրաստ էր։ Բարեբախտաբար տան մէջ ոչ ոք չէր բնակւում։ Պատճառը հիմքի թոյլ լինելն և պատերի բարակութիւնն էր։

«Гр.»-ը հաղորդում է, որ պետական խորհրդին առաջարկուած է Պետերբուրգի Բոժդեստուենսկի կանանց բժշկական օգնականների կուրսը կանանց բժշկական կուրսերի փոխարինելու. նախագիծը գայտնեց 4 տարուայ փոխարէն կը լինի հինգ տարուայ. ուսանողները կին-բժշկի և բժշկական-օգնականի միջին աստիճանի կոչում կ'ստանան։ Ռուսական պատերազմի կրթական հաստատութիւնները պարտաւոր են միասին ապրելու։

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ.—Ներկայ թուի Յունվարի երեկոյին պպ. Պետրոս Մանուկեան և Թադէոս Աւետիսեան մանգալով «աւետիս» և ամեն ջանք գործ դնելով հաւաքել էին ի նպաստ «Ռուսահայկական ընկերութեան» քսան երեք րուբլի ութսուն և ութ կոպէկ (23 ր. 88 կ.), իսկ պպ. Մանուկ Յակովբեան և Մեսրովբ Մարգարեան քահանաների հետ իրենց տրված մանգալով հաւաքել էին նոյն ընկերութեան օգտին տասներկու րուբլի իննսուն և երեք կոպէկ (12 ր. 93 կ.)։ Գովելի է յարգելի երիտասարդների փարձունքը, ինչ ասել կուզէ, որ մեծ նշանակութիւն ունի երեսուն և վեց րուբլի ութսուն և մէկ կոպէկը մեր չքաւոր ընկերութեան համար։

—Այստեղ ձմեռը շատ սաստիկ է, ցուրտը վերջին՝ կէտին է հասել, միթերքների գինը խիստ թանկ է, աւետուրն ընկած է, հասարակութիւնը փաստատութեան պատճառով թմրութեան մէջ է ընկած, ոչ մի շարժում չկայ քաղաքում, ոչ հարստանք, ոչ նշանակութիւն և ոչ էլ մի որևէ խնջոյք. վերջապէս ազմկայի Կաղզւանը այս տարի ներկայացնում է խաղաղ տեսարան։

Ռուսաց գլխաւոր և Անդրկովկասեան երկաթուղային և նաւագնացութեան «Մերկուրի և Կովկաս» ընկերութիւնների միջև, «Нов.»-ի ասելով, համաձայնութիւն է կայացել Նիժնի-Նովգորոդ-Կովկասեան ուղղագիծ հաղորդակցութիւն սկսելու։

«Сенат. Вѣд.»-ի մէջ յայտարարուած է, որ 23 հոգու, որոնք գլխաւորապէս պատկանում են գերմանական և լեհական ազգութեան, թոյլ է տրուած ռուսահպատակութիւնից դուրս գալու։

«Прав. Вѣст.»-ում ի միջի այլ փերջնականապէս դադարած թերթերի մէջ յիշուած է և «Кавказское Обозрѣніе»-ն, որ Թիֆլիսում հրատարակւում էր կոլլեժսկի Ալէքսանդր Ֆրէնկէլի խմբագրութեամբ։

Նկատերինօդարի հայոց ուսումնարաններին մի օրինակ «Նոր-Դար» նուիրել է պ. Կ. Թամամշեանը, վճարելով ներկայ 1889-ի բաժանորդագինը։

ԴԱՐՍԻՑ.—Յունվարի 22-ին թատերասէրների մի խումբ հայոց երկսեռ ուսումնարանների օգտին ներկայացրեց պ. Սունդուկեանի «Պէպօ» կատակերգութիւնը և «Դիւշիրուայ տարը խէք է» փոդվիլը։ Չնայած երկար ժամանակուայ պատրաստութեան, յաջողութիւնը ռխտալուած էր այնպէս բարձր կարգով՝ որ հանդիսականներից շատերը գերասանների ձայնը չէին լսում։—Լաւ խաղացին միայն պպ. Յովհաննիսեանը (Շուշան), Ա. Գրիգորեանը (Պէպօ) և Խ. Մամիկօնեանը (Գիքօ)։

Մի երկրորդ խումբ էլ Վարդանանց տօնի առթիւ կամենում է մի ներկայացում տալ Կաղզւանի հայոց ուսումնարանների օգտին։ Ներկայացուելու է «Ազգասէրութիւն աղաչ չէ» դրամա թարգմանուած ռուսերէնից, որի թարգմանիչը, որպէս թէ, յայտնաբերել է հայոց կեանքին։

Արդարև բարի է, ու գովելի այդ խմբի նպատակը, որ է օգնել Կովկասեան աղքատիկ ուսանողներին։

Բայց հետաքրքիր էր իմանալ, միթէ չկայ աւելի լաւ, ժողովրդի պահանջներին համապատասխանող ոլոր։

—

Նախո-Օրլովսկայա փողոցի բնակիչները մեզ խնդրում են հրատարակել հետևեալը.— Մեր փողոցը՝ կարծես թէ, մոռացուած է քաղաքային վարչութիւնից։ Նա երբէք չէ մաքրւում, ցեխը սարսափելի է, այնպէս որ անցորդները մինչև ծունկ խրւում են ցեխի մէջ։ Դրան աւելի օգնում է այն հանգամանքը, որ այդ փողոցը քարուած չէ։ Հրաւիրում ենք ում անկն է ուշադրութիւնը։

—

«Прав. Вѣст.»-ում հրատարակուած է արդարադատութեան մինիստրի մի կարգադրութիւնը, որով անցեալ դեկտեմբերի 21-ից բարձւում է Օրլովի նահանգական դատարանում փոխ-նախագահի պաշտօնը և նոյն թւից հաստատւում է Բագւի նահանգական դատարանում փոխ-նախագահի պաշտօնը։

—

Տիկին Նիկիֆորովան, որ իր ժամանակին ահագին աղմուկ հանեց պօրուչիկ Պեկարսկուն սպանելու համար և դատապարտուած էր Իրկուտսկի նահանգում առ միշտ բնակւելու, հինգշաբթի, յունուարի 26-ին, գիշերից հագնուած, երկու քաղաքապահների ուղեկցութեամբ, պօստային առանձին կառքով, միւս աքսորականներից ջոկ, իր հաշւով ուղևորւեց դէպի Սիբիր, Իրկուտսկի նահանգը։

—

Լուսաւորութեան մինիստրը, «Гр.»-ի ասելով, մտադիր է Բերլինի համալսարանն ուղարկելու մի քանի հոգի՝ հռոմէական իրաւաբանութիւնից պրոֆեսորի կոչման պատրաստւելու համար։

—

Կերակրեղէնների մէջ վնասակար նիւթեր խառնած լինելը և առհասարակ կեղծիքները գտնելու նպատակով Թիֆլիսում, «Кавк.»-ի ասելով, մի փորձառու մասնագէտ, մտադիր է հաստատելու փորձնական մանրադիտարան, որի նախագիծը մշակւում է։ Այդպիսի մանրադիտարաններ մի քանի տարի առաջ հաստատուած են Ռուսիայի մի քանի նշանաւոր քաղաքներում։

—

Անցեալ 1888 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում սոյն 1889 թուի համար առևտրական, արդիւնաբերական և արհեստանոցային վկայականներ տալուց գոյացել է (Թիֆլիսի և Թիֆլիսի գաւառի համար միայն) 167,886 ր. 80 կոպէկ։

—

Անդրկովկասեան նաւթամուղի խնդիրը, ինչպէս հաղորդում է «Моск. Вѣд.»-ն, իրականութիւն դառնալու վրայ է։ Այդ ընկերութեան հիմնադիրն արդէն կառավարութեան ներկայացրել է մի միլիոն րուբլի գրաւական՝ անմիջապէս ընկերութիւն կազմելու պայմանով, եթէ կանոնադրութեան մի քանի յօդուածները կը փոխուեն։ Այդ փոփոխութիւնները զուտ [illegible] բնաւորութիւն ունին և գործունէութեան չեն վերաբերում։

—

Ժողովուրդը շատ անգամ իր ցաւերը բժշկում է տեղական միջոցներով, գլխաւորապէս գիւղերում զանազան բոյսերի օգնութեամբ, որոնք գործ են ածւում բժշկական գիտութեան մէջ։ Սակայն մինչև այժմ բացի մի երկու առանձին բոյսերից, ոչ մի բուժական բոյս չէր արտահանւում։ Ներկայումս Թիֆլիսի բնակիչներից մէկը՝ պ. Զաւիշեակին, որ գիտնականին նիւթերի պահեստ է բանալու Թիֆլիսում, մտադիր է, տեղական ռուս թերթերի ասելով, կանոնաւոր գործ սկսել զանազան բուժական բոյսեր արտահանելով դէպի Եւրոպա։

Պէտք է կարծել, որ այդպիսով գէթ մասամբ ուշադրութիւն կդարձուի զանազան օգտակար ծաղիկներ, արմատներ, բոյսեր մշակելու գործի վրայ, որը, ինչպէս յայտնի է, բոլորովին երեսի վրայ է թողած մեզանում։

—

Կովկասի պետական կալուածների վարչութեան մէջ տեղի ունեցան այն մի քանի փոփոխութիւններ, որոնց մասին խօսւում էր անցեալ տարի։ Նահանգներում բացի պետական կալուածների կառավարիչների պաշտօնից, հաստատուած է և առանձին օգնականի պաշտօն, մի քանի նոր անտառապահութիւն է հաստատուած, իսկ գաւառական պետական կալուածների գործակալները կոչուած են առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ։

—

Ինչպէս յայտնի է, այս տարի Պետերբուրգում կայանալու է ձկնորսական ցուցահանդէս։ Որոշուած է այդ ցուցահանդէսում արժանաւորներին վարձատրելու համար ոսկէ, արծաթէ, բրոնզէ մեդալներ պատրաստել, նոյնպէս լինելու է և պատուոյ վկայագիր, որոնք միմիայն ռուսական ձկնորսարաններից ներկայացուածներին պէտք է բաշխուեն։ Իսկ օտարազգիները մրցումից դուրս են և նրանց պէտք է, մայրաքաղաքի թերթերի ասելով, մի քանի առաջնակարգ վկայականներ տրուեն։

—

Անցեալ 1888 թուին Անդրկովկասեան երկաթուղով դէպի Սև ծով արտահանուած է 28,416,922 փութ կերօսին, Կասպից ծովով դէպի Աստրախան և ուրիշ ռուսական նաւահանգիստներ 21,559,699 փութ, իսկ դէպի Պարսկաստան արտահանուած է 265,321 փութ։ Այսպէսով ուրեմն Անդրկովկասեան երկաթուղով և Կասպից ծովով արտահանուած է ընդամենը 50,241,942 փութ կերօսին։

—

Կիրակի, յունվարի 29-ին, քաղաքային փոխատու գանձարանի գրասենեակում աճուրդով վաճառւում էին ոսկեղէն և գանձարանի գրաւականներից թանկագին ակներ և թանկագին մետաղեայ իրեր։ Այս անգամ էլ, ինչպէս և անցեալ կիրակի, միայն իրերի մի մասը վաճառուեց։

ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵԱՆՔԻՑ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ

IV.

Մանուկի սկզբնական կեանքը։

—

Անցեալ անգամ խօսեցինք հայ ծնողների սպասելիքների մասին ուսումնարանից և վերջինիս սպասելիքների մասին ընտանիքից։ Ներկայացրինք այն հոգեկան դառնալից վիճակը, որոնք ամեն օր և ամեն ժամ խաղացում են խեղճ ծնողի սիրտն ու հոգին։ Նախ ծնողներին ներկայացրինք ուսումնարանի յուսահատական օրերն ու ժամերը, որպէս զի նրանք էլ ուսումնարանի ցաւերին խառնել ու զգալ լինէին։ Վերջինիս գրութեան վերջին մենք տեսանք ուսուցչին ևս ծնողի նման մի յուսահատական և տարտամ դրութեան մէջ։ Սակայն այս յուսահատութիւնն, ի հարկէ, անցողական պէտք է համարէինք, որովհետև եթէ ուսուցիչն ու կրթական գործով պարապող մարդը հաստատ համառ և յոյս չունենար կրթութեան յաղթանակի ուժի վրայ, նրան աւելի լաւ կը լինէր այդ պարապմունքից ձեռք վերցնել։ Այս մի բարոյական պահանջ է, որին հնազանդելու է ամեն ազնիւ մարդ. առաւել ևս մեր բարոյական պահանջ, որովհետև այն ուսուցիչ-դաստիարակը, որ անպրդելի համոզմունքով չէ գործում, նա խաղում է [illegible] ամենասիրելի յոյսերը։

Ասացինք, որ կրթական գործով պարապողները, եթէ երբեմն վհատւում կամ յուսահատական դրութեան մէջ ենք մեզ զգում, այդ անցողական է, որովհետև մենք ուսումնասիրած լինելով մարդի հոգեկան կեանքը և փորձեր արած լինելով, եկել ենք այն համոզմունքին, որ մարդի մտքերը, հոգու և սրտի զգացումները, ցանկութիւնները, հակումները և այլն այնպիսի բնական յատկութիւններ ունին, որ արտաքին աշխարհի իրերի պէս ընդունակ են այս կամ այն նպատակաւոր կամ պատահական ազդեցութեան տակ փոփոխուելու, ձևափոխուելու։ Բայց և այնպէս իւրաքանչիւր անհատի մտաւոր կեանքի զարգացումն չափ և սահման ունի, այսպէս ասելով և բարոյական էլ, որ մարմնից է կախուած և նրանով զարգանում, վերջինիս վիճակակից է և զուգակից։ Նախ քան մանկան մտաւոր և բարոյական ընդունակութիւնների ուսումնարանում բարգաւաճելու մասին խօսել, հարկաւոր է նախ և առաջ քննել այն խնդիրը, թէ ընտանիքի մանուկն ինչ դրութեան մէջ է աշխարհ գալիս և ինչ պէտք է ծնողը ընտանիքից սպասէ, և ինչ ուսումնարանը ծնողից և ընտանիքից։

Ահա այս բոլորի կարծես զարմանալ լսում եմ և՛ հայ ծնողի հառաչանքի կենդանի ձայնը. «Ինչ անեմ, Աստուած իրեն ինձ այդպէս էր կամեցել»։ Հայ ծնողը հիմնուելով փորձնական կեանքի ցուցմունքների վրայ, իր հասարակ դատողութեամբ գալիս է այն եզրակացութեան, որ իր զաւակի չարութիւնն ու բարութիւնը նախասահմանուած է, բնութիւնից, որը նա այլ խօսքով և ճակատագիր է, անուանում։ Որոնք են այդ փորձնական կեանքի ցուցմունքները. ա) Մենք տեսնում ենք, որ մինչև անգամ երկուորեակներ, ծնուելով միևնոյն հանգամանքներում և սնուելով հաւասար կրթութեամբ, ժամանակի ընթացքում առաւել մեծ փոփոխութիւն է երևում նրանց մէջ. բ) Այս կամ այն աշակերտից այն չէ դուրս գալիս, ինչ որ ուսուցիչը սպասում է և գ) Այնպէս է երևում, որ մարմնաւոր և հոգեկան յայտնի գծեր մարդիս կեանքում ժառանգական վաղագոյն հասակից մինչև շատ բարձր հասակն անփոփոխ են մնում և յետոյ հետզհետէ, հզօրանալով՝ աւելի սուր բնաւորութիւն են ստանում։ Այս այսպէս է և, ի հարկէ, տարաբաղդութիւն է, երբ այս բնաւոր (բնութիւնից առած) ընդունակութիւնները թոյլ կամ վատ տեսակից են։

Բայց այժմ տեսնենք, թէ, արդեօք դու, ով հայ ծնող, քո պարտականութիւնները կատարել ես, արել ես այն, ինչ որ քեզանից էր կախուած։ Բարեբաղդաբար բնութիւնը քո զաւակների ընդունակութիւններին այնքան ընդարձակ ու աստուածային սահմաններ է քաշել, որ դու անգամ երևակայել չես կարող։ Եթէ զաւակդ տարաբաղդութիւն չէ ունեցել պատահական հոգեկան և մարմնաւոր հիւանդութիւն ունենալու, նրան ուղիղ ճանապարհով դաստիարակելով և կրթութեան սարով՝ դու կարող էիր այդ փոքրիկից քո սրտի ուզածից աւելի բան մարդ շինել։ Ուստի քեզ խորհուրդ չենք տալ՝ ճակատագրի պատասխանատուութեամբ սփոփուելու և խղճմտանքիդ բեռը թեթևացնելու, մտածելով կամ ասելով, թէ զաւակիդ դժբախտութիւնը Աստուած էր կամեցել։ Ոչ, այդ սխալ է, աւելի այսօր քեզ մի ամբողջ, սրտի կտոր ես և մտածիր, թէ դու ինչ ես արել և ինչ պէտք է շինէիր քո զաւակին դաստիարակելիս և դու, յաւել ենք, շատ անգամ քո բնական և հասարակ խելքով հետևանքներ լինելով ձեռնարկութեամբ կը գտնես նրանց։ Եթէ դու այս տողերը կարդալ և նրանց մասին ուղիղ մտածել կարող ես, ուրեմն դու բաղդաւոր ծնողներից ես, բայց տարաբաղդաբար քանի՜ քանի ես առաւել են տակաւին այն հայ ծնողները, որոնք յաճախ կարող էր խորհուրդ առաւ աւելի լաւ իրենց զաւակների ներկայութեամբ, քան խօսել ու գործել և ընտանիքի անդամների հետ վարուելիս՝ իր մեծասակար բարոյական ազդեցութիւնը և գործնականապէս թէլի անկ։ Որքան սակաւ են այն ծնողները, որոնք քիչ թէ շատ ընդունակ լինելով իրենց խօսելու ու արարմունքը նախապէս կշռադատելու, թէ նրանք ինչ տպաւորութիւն կը գործեն մանուկ մտքի և զգացմունքների վրայ։ Եւ քո զաւակին, ով հայկական ծնող, ամեն ժամ, ամեն բոպէ կրում է այդպիսի տարաբաղդ ընտանիքի տարաբաղդ զաւակների հետ։ Ի՜նչ մխիթարական բան կը լինէր, եթէ հնարաւոր լինէր այդպիսի բարոյական թոյլ կազմակերպութիւն, հիւանդութիւն ունեցող ընտանիքների զըրխաւորներին բարոյական սահմանադրութեան (զիմարի) ենթարկել, որ նոյնքան կարևոր է, որքան մարմնաւոր հիւանդի համար բնութիւնը իմաստութեամբ սահմանել է։

Մտնելով հարևանաւոր աշակերտների մէջ՝ սկսում ես զննել նրանց կեանքը։ Քանի քանի հարկնաւոր տպաւորութիւններ են փոխարինւում նրանք այստեղ, ուսումնարանի բակում անցկացրած մի քանի բոպէում։ Տեսնում ես ամեն օր էլ դրանց բարոյական յարաբերութիւնների ընթացքի երևոյթները և ամեն անգամ էլ զգում ես քեզ հանդիպակ լինելիս մի անասորդն բարոյական պատերազմի դաշտում, իւրաքանչիւր անհատ մանկան և բարոյական կեանքում տարօրինակ երևոյթի բիւրաւոր թշնամիներից շրջապատուած։ Բայց աչքի զանգակը հնչում է, խուռնախուռն ուսուցիչ մի քանի տասնեակ աշակերտ իր շուրջն է հաւաքում՝ առանձին, հրահանգի միջոցով ջոկ մէկ ու ձնշելու այդ բազմաթիւ աշակերտների վատ հակումները, մասամբ նրանց փորձերը—որոնց փոխարէն բարին և գեղեցիկը սերմանելու և բարգաւաճելու։ Սակայն մինչև երբ. 2—3 ժամ ես, և յետոյ այդ մանուկները կրկին փողոցի և ընտանիքի կեանքը կը մտնեն։ Բայց մենք չը մոռանալով մեր այսօրուայ գլխաւոր գիտաւորութիւնը՝ կրկին ընտանիք երթանք։

Մեր խօսակցութիւնների թէև բուն ուսումնարանից ընտանիք տարաւ և սրանից էլ մենք հետամուտ լինելով մանկան կեանքի սկզբնաւորութեանը՝ պէտք է յառաջանանք բնասէր ընդունակութիւնների խնդիրը, որ տանում են մայրական արգանդում։ Ուրեմն այժմ համեակամ մարդկային կեանքի սկզբնակէտին՝ այստեղ կանգ առնենք և այստեղից հակառակ ուղղութեամբ սկսենք։

Ցած հետաքրքիր են բժիշկների արած նորածին փորձերը նորածին մանուկների վրայ, որոնք ցոյց են տալիս, որ որոնք արտաքին աշխարհի կեանքի հինգ առաջին ժամերում ընդունակութիւնն ունին շօշափելիքների (ծնուելու վայրկեանին սպասում, առաջացած մնացուածք), տեսանելիքի, համտեսելիքի և հոտոտելիքի զգացմունքներ։ Ամենից ուշ արթնանում է լսելիքը, որ սակայն երկու օրից յետոյ այնքան առաջանում է, որ սարքեն զանազանում է, մնաւորապէս ձայներ լսումներից։ Ամենից աւելի զարգացած են լինում նորածինի շօշափելիքն ու ճաշակելիքը, որոնց նա մայրական արգանդում գործածելու առատ դէպք կարողէ զէյքեր էր անցկացել։ Մինչև անգամ 7—8 ամսական ծնունդներն ունին միևնոյն ընդունակութիւնները, բայց ինչ է այս անհրաժեշտ ապրած հոգեկան կեանքի այս առաջին ժամերի, օրերի երևոյթները, համեմատելով հետևեալ ամիսների և տարիների հետ։ Որքան մարդու դառնալն աւելի բարձր է, լինելու իր մասնաւոր բարոյական կեանքով կենդանիներից, այնքան նա աւելի դանդաղ է զարգանում, մի հրաշալի միջոց, որ բնութիւնն տուել է մարդկային ծնողի ձեռքը, իր զաւակին իր բարձրագոյն կոչման դաստիարակելու։ Թէ ծնողն այս գործը հենց առաջին ժամերից ինչպէս է սկսելու և շարունակելու՝ հետևեալ անգամ կը տեսնենք։

Յ. Տ.-Մ.

Ալէքսանդրապոլ.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ *)

Մ. Աւետեան «Նմուշներ». Շուշի. տպարան հայոց հոգևոր տեսչութեան. 1888 թ. գինն է 40 կոպ.

Ե.

«1888-ի Տարեմուտը» երկրասակ[illegible] բանաստեղծի համար սկսւում է [illegible] նկարին կառավ. յուզւում, [illegible] անցնում նրա մտքերը, զգացումներն ու երևակայութիւնը, իսկ բաները էլ այդ ձգտումների կոխը գեղեցիկ կերպով արտայայտւում։ Երգիչը անհոյսին գրութեան մէջ կանում է իր երևակայութեան ծնունդների՝ ցնորքների ու անուրջների հետ, որոնց փոքրան խառնամուխքից յարմար փորձած է, [illegible] Ջօր է, դրանց՝ այդ ցնորքների ամբողջ ջախջախ հրապուրել արտասանքը, զօր է և նրանց գեղեցկական երգը. ճշմարիտ է մի ժամանակ

Օրր ցերեկ իր նկրտահասաւն
Դրախտ հոգին, ինչ որ երազում,
Սիրտ, հանգստի և փայլեղութեան
Ոսկեղէն աշխարհ էր շատ առեղծում,

Բայց այժմ խօլ պատմանին հասկացել է ու տեսել, որ նրանք առանց մի հետքի ցնդում են օդում նոյնը ծխի նման, թէ չէ, էլ ո՞ւր է այն փայլեղութիւնը, ո՞ւր այն աշխարհները... չէ։

Այլ ես ձեր բայր
Չի կարող սրտիս տառապր փախել.

Անցնելով 23 եռամ տարիներ և ցնցելով իր ամբողջ անցեալը,

Երբ միտքը տեսա սիտեր հասկանում
Ե՛ւ վիշտ և՛ թախիծ, խնդութիւն և սէր,

անցեալ, որի մէջ կորան իր ամեն երազները առանց մի արդիւնք ու վաստակ թողնելու, տարեմուտի օրը բացականչում է վշտահար սրտով. «Դո՛ւք, Նոր վէմեր, նոր ցնորք ցարդ ուռած սրտիս ամեն ճարակ...

Ա՜խ, տուէք չուռալ ինձ այնպիսի բաց,
Որ երբէք վառել իմ սիրտ ու հոգին,
Որ երջանկութեամբ լցնում մարդու ծաց,
Կեանքը սիրել է տալիս կաթօղին.
Թող աստղների այն հուր հեղափայլ,
Որ առաջուում է, երկնքի ձախում,
Դաչ, իջնէ, սրտիս խաղքերը մաշէլ,
Թօթափէ, սրտիս բաղերն հրաւէր.
Թող երկրադաւն սիրոյ մեծ կայծում
Անցնի մի անգամ ներքրուս միջից,
Եւ [illegible] կեանքի փարթամ
Ճօչ իմ կրծքումը գառնակիլք.
Թող ծոսին ներքուս անհամար ցնդեք,
Արարչաց կեանքի ողկած երազ,
Թող առատաձայն թագդաւոր շըջէք
Սրտում սիրոյ փայլ հանդարտ։

Անձ մեր օրերի լաւութիւնից մի շօշափելի գիծ. սակի երազներում երկրառարը կեանքի մէջ է, մտնում և լանլակում կարծես տասը ջուր է, մաքրում նրա գլուխը. և նա անցեալի ու ներկայի, ցնորքների ու իրականութեան ազդեցութեան տակ շուարում—մնում է, ահա և մեր կեանքի մի տխրական կողմը. Դեռ բան է, որ իր ապառում սիրտը, իր պետութիւնը հանգստացնել վառ ապաւինել համար բանաստեղծը աս-

*) Տես «Նոր-Դար» № 11.

տատածոյին չտըք, եկեղեցին չար է, հայցում, ուրեմն և հաշտւում է քրիստոնէութեան հետ։ Բայց տեսէք, որ շատ շատերը հասարակական տափակ կեանքի ազդեցութեան տակ հարթւում են, ընկնում, քարացեալ մնում։ Նրանք, որ կրթւում են յանուն իդէալների, կեանքի մէջ մանկուց յետոյ դառնում են մոլի եսականներ։ Թողնենք բոլորը, քանի քանի անգամ էք լսել մեր գլխաւորական հասարակութիւններից, մեր մարդասիրական ու բարեգործական ընկերութիւններից, մեր մեկենասներից, որ իրենց գոհարկութիւնները ի զուր են կորչում, որ իրենք նպատակի չեն հասնում, որ երիտասարդները մեծ խոստումներով իրենց օժանդակութիւն են վայելում, և որ դրանց խոստումները հենց խոստումներ էլ մնում են։ Եւ ինչ է դրա պատճառը,—այն՝ որ իդէալիստ երիտասարդների ամեղամ երազները, իդէալները հանդիպելով իրականութեան ցուրտ մակերևոյթին սառչում ու ոչնչանում են։ Այսպէս է ընդունում և բանաստեղծը—ինչպէս երևում է իւր «Քերթածի զաղափարին կանգնած եմ բարձր» բանաստեղծութիւնից։ Ինչպէս որ ձորում փայլող հանդերը՝ ծծելով բարի, կարծր ափերը, զարմանալի սիրահարով գլորւում է, սառչում և անհետանում ամենամեծ ավկիանոսի խորքում, այդպէս էլ երբեմն իմ ջերմ և անկեղծ սրտատրոփներն անդադար փայլում էին եղբօրս համար,—երբ հագիս վառւում էր երազատեսող մանկութեան կրակ...

Բայց երբ որ մտայ հասարակութեան
Անզգամ խուռն մէջ, որտեղ կայ լոկ
Անզգամ սրտատուքը պղտորութեան,
Որ հանգչում սրտի թրթռուն բոցը,—
Եւ իմ սրտատուքը չալխացաւ,
Ինչպէս քո կաթիլն անտառայ օրում,
Եւ իմ բոցեղէն կրակը դարձաւ
Սառն կարեկցութեան սրտի ծալերում...

Այսպէս, ուրեմն մեր կեանքի մէջ երևացող մի տխուր երևոյթ բանաստեղծը բացատրում է ընդունուած ձևով.—ամեն մի բարձր ձգտումն հանգչում է, այստեղ՝ այդ կեանքի մէջ։ Եւ միայն այդ, էլ ուրիշ ոչինչ... Տեսնենք։ Մեր quasi իդէալիստները կարծես ապառում են, որ առաջուցից բոլոր խաչ ու խութերը վերցնուեն, կեանքը բարեկարգուի և ապա իրենք նրա մտնեն։ Ա՞յդ է բարձր ձգտումը, այդ է իդէալականութիւնը նորերուների, որոնք պախարակում են հէնց սերունդը, նրա գործն ու միտքը, նրա զգացմունքն ու ըղձերը։ Եւ միթէ այդտեղ դուք իդէալականութիւն էք տեսնում. Ուրիշ յայտնի կեանքի ասպարէզը մտաւ, կեանքը չէ տալիս նրան իւր ապաստանը, և նա հեռանում է, թէրևս միայնակ բարեփի ապաստանը։ Այժմ հարց է. այդ ապաստանից ում արդեօք օգուտ չկայ է ապառ (երիտասարդը) իրեն, թէ հասարակութեանը...

Բայց նա, որ ոգևորւած է իւր փոխ ձգտումներով, որ հոգու բոլոր զօրութեամբ գիտում է դէպի փոխը,

Դէպի նպատակ, դէպի կատարեալն ու դէպի բարին,
Որ անհրաժեշտ լուս յառաջիսալ պարտք է մարդկային.

Նա, որի իդէալը գլխաւոր ու բերանում չէ, այլ սրտումը, որ այրում, բորբոքում ու մի բայլ հանգստութիւն չէ տալիս, նա՝ այդպիսի մարդը ոչ մի արգելքի առաջ գլուխ չի ծռնիլ, առանց փառքի ու ոսկի յոյսերի ապաստելու իւր խաչը կառնէ, կը մտնէ կեանքի փշալից ասպարէզը և համբերութեամբ իւր խաչմանը կը գիծէ, իւր մաքերը կը մաքնասորէ. Ճշմարիտ է, նա բազմատեսակ չարչարանք ու նեղութիւնների կը հանդիպէ, բայց ոչինչ չի վհատիլ նրա, այլ աւելի կը ոգևորուի, որովհետեւ առաջարկը չմտած, նա այդ աչքի առաջ ունէր Մեծ մարգարէի, Աստուածամարդու կեանքը նրան լաւ յայտնի է. «Նեղ է դուռն և անձուկ ճանապարհն, որ տանի ի կեանս»։ Ուրեմն հասարակական կեանքը չէ միայն մեղաւոր, այլ և կրթութեան այն ուղղութիւնը, որով դաստիարակուել, զարգացել են այդ երիտասարդները։ Նայեցէք մեր առաջաւոր գործիչներին, թէ՛ ժողովրդական, թէ՛ գրականական և թէ՛ գիտնական ասպարէզներում, և խոյն կը տեսնէք, թէ ո՞րն է եղել կրթութեան ոգին, որ այդ մարդկանց մեծել է դէպի գործ։

(Կը շարունակուի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՈՒՇԻ, 27 դեկտեմ. — Շուշին թէև առաջ, բայց պարսից սահմանագլխին մօտ քաղաք է, մինչ վաճառականական յարաբերութիւն է ունեցել պարսից Թաւրիզ քաղաքի հետ, բերելով միշտապէս նոյն տեղից մեծ քանակութեամբ զանազան տեսակ ապրանքներ վաճառելու համար և այդ վաճառականները գլխաւորապէս եղած են հայերը։

Թէև վերջին ժամանակներս վաճառականները ծանօթանալով Ռուսիայի հետ, այլ ևս առաջւայ պէս չէին յաճախում Թաւրիզ, բայց Շուշու և նրան շրջակայ ամբողջ հայ թէ թուրք ժողովրդականների դարերի ընթացքում գործածելուց սովորութիւն դարձրած լաւ ու ձևնոտ ապրանքների մասին չէին կարողանում բոլորովին կտրել իրենց յարաբերութիւնը Պարսկաստանի հետ։

Վերջին թուականներումս հայ վաճառականութիւնը ընկաւ, պարսիկները սկսեցին կանգնել. այն ապրանքը, որ հայերը ծախում էին օրինակ գրվանքը 20 կ., պարսիկը 18 կ. էր տալիս ոչ թէ միայն քաղաքում, այլ և ամբողջ գիւղօրայքում. ինչո՞ւ, որովհետև հայը մաքս է տւած և այն սակով և նրա վրայ թանկ է նստում. իսկ նրանք, պարսիկները, միշտ գնում են Թաւրիզ և իրենց սիրտը ուզած ապրանքն առնում ու առանց մաքսի փախցնում Շուշի կամ գիւղօրայքը—որտեղ առևտուր ունին։

Նրանցից շատերը Թաւրիզ մշտական իրենց մարդիկը ունին և հարկաւոր դէպքում միայն միաքը իրենց յայտնի հեռագրի միջոցով ինչ հարկաւորն է առնել տալով, նշանակեալ ժամին խմբովին «Արաքսի» այս կողմն պատրաստ են.... Բայց հայերից ո՞վ մէկը կը վստահանայ այդ վտանգաւոր գործը կատարելու, և ոչ մէկը։

Բայց ինչ անէ հայ վաճառականը. նա բացի վաճառականութիւնից ուրիշ կերպ չէ ուզում ապրել, նա տեսնում է, որ հետզհետէ իւր երկար տարիների ընթացքում դրած մուշտարիները հեռանում են իրենից, որովհետև պարս. աւելի էժան են տալիս. ինչ արած, ինքը ի հարկէ չէ կարող դաշնակցութիւն անել, ուրեմն հարկաւոր է մաքսանենգների ապրանքը իւր մօտ ունենալ, որպէսզի իւր մուշտարիներն իրենից չխորթանան։ Բայց այդ շատ թանկ է նստում և վնասում թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս ոչ թէ միայն իրեն, այլ և ամբողջ հայ վաճառականական անւանը։ Թէ ինչո՞ւ, ահա պատճառը։

Քանի օր սրանից առաջ, գիշերուայ մէջ ամբողջ պարսիկների թաղի դուքանները պաշարեցին կողակներով. 3 օր շարունակ ոչ ոք չկարողացաւ դուքան բանալու. Մաքսատան ատեանացին և տեղական հաշտարար դատաւորի ներկայութեամբ բանում էին հերթով դուքանները, նայում էին անխնայաբար բոլոր ապրանքներին, որի վրայ կնիք կամ պլոմբ չկար, (լինէր այդ Ռուսի—Շուշու և կամ Շամախու գործուածք) վերցնում էին. վերցնում էին նոյնպէս առաքումի համար եւրոպական և միւս իրենց ըմբռնած ապրանքներից (թէև առաքումի վաղերն էլ այս երկու օրս կանխիկ տալացն), վառահացան մինչև անգամ մի քանի դուքանների դռները կապելու։

Այս մասին երկար չեմ ուզում գրելու, միայն թէ հայերը մեծ կորուստ ունեցան. պարսիկներն, ինչպէս բերելու՝ նոյնպէս և պատժւելու մէջ միշտ քաջ են։

Արդեօք այս անգամ գոնէ կը խրատուեն Շուշու վաճառ. և տեղական քաղաքական վարչութեան միջոցով կը խնդրեն, որ Շուշւում ալբոյի շարգաթ գործողներին և ներկայացուցիչներին կնիք ունենալու իրաւունք ունենան իրենց գործարաններից դուրս եկած ապրանքները կնքելու համար։ Կը խրատուեն հայ վաճ., որ բոլորովին թողնեն պարսիկների թաղը և բարձրանան հայերի մէջ, որով թէ իրենց տարեկան 30—40 հազար պարս. դուքանների համար վճարած փողը կը մնայ հայերի մէջ և թէ իրենցից առած ապրանքները 10 օրից յետոյ ջարդւած, ծալքից ընկած չեն ետ դարձնիլ իրենց մի քանի սպառնալիքներ և կծու խօսքեր առելույ յետոյ։ Ինչու հայերի թաղի դուքանները չպաշարեցին, չկնքեցին, որովհետև խեղճ հայերի վրայ կասկած չեն ունեցել և չեն կարծել, որ նրանք այդ տեսակ անաւանդակ և վնասակար գործերով կը պարապեն և կը պարծենայ անգամ, որ հայերի մօտ ևս անմաքս ապրանք էր գտնւում, որը սրբւածի պարսիկներից են առնւած։

Վաճառական

ԱԽԱԼՑԽԱ, 24 յունվարի.—Յունվարի 22-ին Ախալցխայի ու Փոքր եկեղեցու համար երեսփոխ ընտրող 30 պատգամաւորների ընտրութիւնն էր։ Երեսփոխանական հարցի մասին շատ էր խօսւում առհասարակ ամեն տեղ—մեր երկրի ոլորաններում. ամենքն էլ դառ էին անւած այդ մարդկերից, բայցն էլ օձկնէրը թափ էին տալիս։ Հենց խեցի ընտրութեան մասին, շատախօսի Նզխա. օր դպրոցի դահլիճ. այնտեղ պիտի լինէր պատգամաւորների ընտրութիւնը։ Հետաքրքրւած էի տեսնելու՝ առհասարակ ինչպէս են ծնւում մեր ժողովրդի մէջ այդ առասպելական էակները. «որանց բերանը մի ջուալ, փորը մի անդասակ հօր. լցւում են, լցւում, ջուրն էլ փսնճնում է, թէ մէջը միայն օդ է»։

Ժամի 12-ին սկսւեց ընտրութիւնը։ Մինչև այդ ժամանակը Ախալցխայի բազմաթիւ հայ բնակիչներից (բոլոր ժողովուրդն է ընտրող, ժողովուրդն եկեղեցիների չի բաժանւած) հազիւ հազ 101 մարդ էին հաւաքւել, այն էլ զօրով ու աղաչանքով, որ ընտրողական օրինաւոր թիւր լրանայ, ընտրութիւնը չխանգարւի։ Ընտրողների մէջ կային ծերեր, այրեր, երիտասարդներ։

Տէր հայր նախագահը ժողովը բացեց հասկացնել յայտնելով, որ երեսփոխի ժամանակը լրացել է. պէտք է 30 պատգամաւոր ընտրել, որ նոր երեսփոխ և 5 հաշուեհաս ընտրեն։ Ի հարկէ հաշուեհաս — հաշիւր քննող պէտք հասկանայ։ Ժողովութեան հրամանը կարդալու յետոյ առաջին հարցն եղաւ՝ «ձայնով լինի թէ թղթով»։ Դահլիճի մէջ շատ ձայն ու աղաղակ լինելուն համար ընդունւեցաւ, որ ձայնով լինի։ Սկսեցին այստեղից այնտեղից անունները արգանակները առաջարկել, որ անմիջապէս ձայնարկւում էր. ով որ համաձայն էր լինում ձեռք էր բարձրացնում երբեմն ձայնը կցելով՝ «ընդունում եմ, ընդունում եմ»։ Մի անթօթամ յայտնի էր լինում ձայների բազմութիւնը. ձեռներն անտառ էին կազմում։ Այստեղ բոլորովին չէին մտածում երկու ձեռների մարդու վրայ, այլ հաշւում էին, որ մի ձայնի հետ էլ մի ձեռք կը բարձրանայ, երկակի շարժում չի լինիլ։ Մէջ ընդ մէջ լսւում է նախագահի միապաղաղ ձայնը. «Նշան տւէք, նշան. ուրեմն ընդունում է»։ Քարտուղարն խայտն ու թանաքով գրւում էր նախագահի եզրակացութիւնը։

Բոլոր առաջարկւածներն ընտրւեցան, բացի երկուսից, որ սևացան։ Մէկը սուտ փոշ ճակատագրին հնազանդւեց, Աստուծու պատիժ համարելով. միւսն այդքեղ մարդկանց պատիժ կարծելով. «Ինչու բոլոր ընտրւածների ձայները չհամարւեցան, միայն իմս...»։ Պատասխան եղաւ. «Ժամը քիչ էր, առաջելու համար»։ Բայց այդ մարդը հաւատ չեկաւ. միայն ննջամիտ խարդաւանք երևակայելով իւր ձայների քրչութեան մէջ բորբոքւած զայրացմամբ դուրս գնաց։ «Արդէն երեսուն թիւը լրացաւ, ոտքի, դէ ապահեցէք արձանագրութիւնը կարդալ, ստորագրեցէք», եղաւ նախագահի վերջին եզրակացութիւնը։ Մեծ մասն սպասում էր, ամենք էլ ոտնատակի սիրտն ամփոփելով դուրս են պրծնում, առանց լսեն նոյնիսկ փախչում։

Արձանագրութիւնը կազմւեց. յանկարծ յայտնի եղաւ, որ 29 հոգի է ընտրւած։ Ո՞ւմ ընտրեն, ում չընտրեն. ամենքը միաձայն գոչում «պարոն Յ. Ձ.-ին, նրան չընտրեցինք խռովից գնաց հիմայ էլ ընտրենք հաշտւի»։

Ահա երկուսը, որից պիտի ծնւին առաջնի մի առասպելին երեսփոխ։

Այս հասարակ տարումը, երևում է, շատ ընտրութիւններ են լինելու։ Արդէն պատրաստութիւններ են լինում քաղաքագլխի և խոստովանների ընտրութեան համար։ Ժողովուրդը շատ անտարբերութեամբ է վերաբերւում դէպի այդ ընտրութիւնները. ջերմ սէր չկայ. դեռ իւր անձնական շահը չէ տեսնում այդ ընտրութեան մէջ. դժուար էլ է ժողովրդի համար տեսնել. դրա համար բաւականին երկար բարդ մանրաբերութիւններ ու դատողութիւններ են հարկաւոր, իսկ նա իւր աչքի առաջինն է տեսնում՝ այն էլ խարխափելով։ Միւս կողմից էլ, կարծես, նրանց համար էլ մինչև այժմ քաղաքային ինքնավարութիւնը ծանր բեռ է, եղել և այդ բեռը դեռ զգացնել չէ տալու իւր գոյութեան անհրաժեշտութիւնը։

Եւ ժողովուրդը չէ էլ կարծում, որ ինքն է բարիքի ու չարիքի աղբիւրը. որ այդ իւր արած ընտրութիւնը կարող է համ չարութիւն բերել համ բարութիւն. Նայելով թէ ձեռքն ինչ տեսակ է շարժել՝ «վեր թէ վար» կամ սև ու սպիտակ քուէները դէպի ուր է գլորել։ Մէկ էլ խոռոված են հաշւեցնելու համար է ընտրել թէ գործի։

Ասում են այստեղ էլ «ագիտացիա» են անում, բայց «բախխահ» (օղի) և գաւաթով (սուրճ)։ Այդ բարի ժամանակներն ամենքը երգում են գանում—քրիստոնէական հաւասարութիւն է տիրում. մեր անփող երգողները, որ կարող էին միացած իրենց փողով մեծ երգողների ձախին անգամ, այժմ բազմաթիւ հանելով ու նրանց բազմոխոս լիզւում ուրախ ուրախ ցնծում են և թէև են անում թէ, երկինքը թրաշէ։ Գինետների և սրճատների դռները լայն լայն բացւում են, և հրեշտակային ձայնը լսւում է. «Եկայք, փառաւորեալ և ծարաւեալ եղբարք, զի պատրաստ է, բախն և գաւաթը, առ Նորքս և Նարգիլէ» հասած են բախին և գաւաթին արքիւները։

Խմողը ձրի խմում է,
Վաճառողը ձրի չէ ծախում.
Յանկա ցողերն ընտրւում են,
Անցնում են տարիներ,
Քաղաքի պարտքը դիզւում է։

Վերջապէս ում տանը պէտք է ծախուի, պարտքը վճարելու համար։ Աչքներդ բացէք և այս հանգոյցը լուծեցէք։

* * *

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՒՍՏՐԻԱ-ՈՒՆԳԱՐԻԱ. — Յունվարի 19-ին բաց են արել թագաժառանգ Ռուդոլֆի կտակը, որ նա գրած է եղել դեռ 1886 թւին։ Այդ միջոցին Էրցհերցոգ Ռուդոլֆը հիւանդ էր և իւր տեղը ժառանգ նշանակել է իւր մանկահասակ աղջկան—Եղիսաբէթին։

—Ֆրանց-Յօզէֆ կայսրը կարեկցական հեռագիրներ ստացել է բոլոր թագակիր անձերից և երկրների կառավարիչներից.—Պապից, գերմանական, ռուսական կայսրներից, անգլիական արքունական թագուհիներից, Բէլգիայի, Ռումինիայի, Յունաստանի, Սերբիայի թագաւորներից. Ֆրանսիական, Հիւսիսային Ամերիկայի հասարակապետութիւնների և Զուիցերիայի դաշնակցութեան նախագահներից և միւս բոլոր պետական բարձրագոյն անձերից։ Նոյնպէս ցաւակցական հեռագիրներ ստացել է Կարնոյի անունով և պետական նշանաւոր անձերից—իշ. Բիսմարկից, պ. Գիրսից, մարքիզ Սալիսբուրից, պրն. Կրիսպիից, Կալնոկից և Տիսսայից,

—Էրցհերցոգ Ռուդոլֆը իւր կարգադրութիւնը թողել է իւր աղջկան, թողնելով սակայն, մինչև նրա կատարեալ հասակ լինելը, այդ կալքից օգտուելու իւր ամուսնուն։

—«Нов.»-ի հաղորդելով, որ աւստրիական պաշտօնական թերթերը նոյն իսկ Էրցհերցոգ Ռուդոլֆի մահուան պատճառների մասին հակասական տեղեկութիւններ հաղորդեցին, անտրամաբար է համարում նրա մահը նրա անձնասպանութեամբ բացատրելը։ Այնուհետև յիշում է, թէ ինչպէս Գամբէտտան, որի վրայ ամբողջ Ֆրանսիան աչապին յոյսեր էր դրել և ընդունակ մարդ էր, մեռաւ՝ նախ գնդակի բաց երևոյթին թեթև հարւած ստանալով թէև. Սկոբելեւ, որ որոշ ծրագրի գաղափարի քարոզիչ էր, նոյնպէս անժամանակ մեռաւ. Բաւարական Լիւդվիգ թագաւորը, որ մի ապառաժիա մարդ էր, շատ խորհրդաւոր կերպով անձնասպանութիւն գործեց։ Այժմ էլ Էրցհերցոգ Ռուդոլֆը, որ Լիւդվիգ Բաւարացու նման ունէր ազատ գաղափարներ և նրա ընկերն ու գաղափարակիցն էր Գերմանիայի նոր կազմակերպութեան և ազգերի ազատ զարգացման մասին, խորհրդաւոր մահ է ստանում։

—Էրցհերցոգ Ռուդոլֆն իւր բարեկամ Սաքսոն Կարոլինն Վիեննայից հեռագրով կանչած է եղել իւր մահից առաջ իւր մօտ։ Սաքսոն Կարոլին ակնարկում է Էրցհերցոգի մօտ դէպի Մայերլինգեան ամրոցը, բայց չհասած, ճանապարհին խմանում է նրա մահուան լուրը։

—«Гражд.»-ը Էրցհերցոգ Ռուդոլֆի մահուան առթիւ ասում է. «բոլոր առասպելներն մի բանի են հանգում—անկասկած է, որ այլինց Ռուդոլֆին սպանել են։ Բայց որովհետև այդ փաստն ընդունելով իրեն ձևացրած, ինչն բառ իրական հարց է դարձնում—ով է սպանել, ապա cherchez la femme առացուածի զօրութեամբ, ինչն բառ ինքեան երևան է գալիս ռոմանտիկական տարրը,—ոմանք ասում են, թէ դա ամերիկական մենամարտի հետևանք է, ոմանք՝ թէ, որ և է, ամուսնու գնդակի հետևանք և այլն. այնուհետև երևան են գալիս քաղաքական գոյն ունեցող պատմութիւններ, բաւարական թագաւորի հետ ունեցած բարեկամութիւնը.... Ըստ երևոյթին մի բան անկասկած է,—այստեղ ոչ ոք չէ իմանում ճշմարիտը»։

ԱՆԳԼԻԱ.—Լօնդօնից հաղորդում են, որ Բերլին նոյնիսկ, այնտեղ խիստ մեծ տպաւորութիւն է գործել «Contemporary Review»-ում հրատարակուած Բիսմարկների ցեղի մասին յօդուածը։ Յօդուածագիրը յայտնի չէ, բայց կարծում են, որ իշխ. Բիսմարկը այդ վերագրելու է այրի Վիկտորիա կայսրուհու ազդեցութեան, որի պատճառով էլ փախենում են, որ անտարբեր միջամտելիք ծագին։ Նոյն աղբիւրներից հաղորդում են, որ մարքիզ Սոլսբերին խիստ դրդուած է այդ գիւղքով, որովհետեւ նա փախենում է, որ այդ հանգամանքը կարող է արգելք լինել Գերմանիայի և Անգլիայի միջև բարեկամական յարաբերութիւն պահպանելու համար իր արած ջանքերին։

ՖՐԱՆՍԻԱ. — Պարիզում Բուլանժէի տարած յաղթանակը բոլոր երկիրներում էլ բաւական տպաւորել հանեց, բայց «National Zeit.»-ի ասելով, մի առանձին նշանակութիւն չեն տալիս Գերմանիայում այդ յաղթանակին և չեն կարծում, որ այդ ընտրութիւնից յետոյ Ֆրանսիայի դրութիւնը մի բանով փոխուած համարուի։ Գեներալ Բուլանժէի ընտրութիւնը դեռ կարող չէ տագնապ լինել, թէ Ֆրանսիական հասարակապետութիւնը կենդանի չէ, ուստի Գերմանիայի քաղաքական շրջաններում ամենևին չեն էլ մտածում օրհասական աչքով նայելու այդ հասարակապետութեան վրայ։

—«France» թերթը հաղորդում է, որ բելգիական սահմանից երկու վերադարձ, Լօնդոնում բանակով Ֆրանսիական գնդից կէս փախ զօրք, այսինքն 71 հոգի, փախել է ծառայութիւնից և գնացել է Բելգիա ապաստանելու։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** 1892 թուին պիտի տօնուի Ամերիկայի գտնուելու 400 ամեակը։ Այդ առթիւ Վաշինգտոնում մտադրութիւն կայ կազմելու երկրի արդիւնաբերութեան ցուցահանդէսը, որ նկարագրած կը լինի արդիւնաբերական ճիւղերի պատմական զարգացումը։

*** Այրի Վիկտորիա կայսրուհին մօտերքս այցելել է «Սմիթսոնեանի ցուցահանդէս»-ը, ուր երկար կանգ է առել Մարի Ստիւարտի գլխատման պատկերի առաջ և ասել է. «Խեղճ Մարիամ. եթէ երկու դար ապրէի, ես քեզանից յառաջ կը զրկուէի գլխից»։

*** Պարիզից հաղորդում են, որ Նիկոլայոս այնտեղ հասարակ աչքով երկնքի երեսին ցերեկով երևում է Աստղիկ աստղը։ Հաղորդում են, որ այդ մոլորակը հասարակ աչքով երևացել է և 1858 ու 1799 թուերին և այդ ժամանակ նրա անունը դրին «Բօնապարտի աստղ»։

*** Ռուսաստանում 1888 թ. յունուարի 1-ին եղել է 38,507,177 ձիւ, որից 12,220 հոգու ունեցին 90 տարեկանից մեծ են, իսկ 97 հոգի 100 տարեկան են։ 97 հոգուց 73-ը կին է, և 24-ը տղամարդ։ Երկու կին 112-ական տարեկան են։

*** Կրուպի յայտնի գործարանում իտալական «Sardegna» զրահանաւի համար պատրաստում են մի ահագին թնդանօթ՝ 139 տօնն ծանրութեամբ, 52 ½ ֆուտ երկարութեամբ։

*** Ֆիլադելֆիայից հաղորդում են, որ Ֆօրեստի ցիրկում խեղդել են մի կատաղած փիղ։ Սկզբում մտադիր էին եղել նրան էլեկտրականութեամբ սպանելու, բայց ոչ ոք միտ չէ արել, որ մօտենայ փղին էլեկտրական թելը փաթաթելու համար։ Ծառաներից մինը կարողացել է մի կերակրով թոկ գցել խեղճ փղի վիզը, որի երկու ծայրը առել են երկու ուրիշ փղերի, որոնք հակառակ կողմեր քաշելով թոկը, խեղդել են իրենց ընկերին։

*** Վարշաւայում կազմուած թեան ուսանողներից մինը կազմել է մի հաւաքածու անձնասպանների յատուկ նամակներից, որոնք դասաւորուած են առանձին կարգով—նախ հրացանով կամ ատրճանակով անձնասպանութիւն գործողներինը, յետոյ ջրում խեղդուողներինը, յետոյ կախուողներինը, յետոյ թունաւորուողներինը։

ԵՐԵԿՈՅԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(«Հիւսիսային գործակալութիւնից»)

—

ՊԱՐԻԶ, 30 յունվարի.—Պատգամաւորների ժողովում Ֆլօկէն սպահանջեց, որ նախապատուութիւն տրուի շրջաններով ընտրութիւն անելու խնդրի քննութեան, խոստանալով, որ այնուհետև պիտի առաջարկէ սահմանադրութեան վերաքննութեան նախագիծը։ Պատգամաւորների ժողովը 308 ձայների մեծամասնութեամբ 243-ի դէմ որոշեց—առաջին օրինագծի քննութիւնը սկսել երկուշաբթի, իսկ 504 ձայների մեծամասնութեամբ 9-ի դէմ—սահմանադրութեան վերաքննութիւնը կատարել հինգշաբթի օրը։

ՀՌՈՄ.—Քաղաքում կարգը վերահանգնած է. մօտ 160 հոգի ձերբակալուած են. Հրապարակական ժողովներն արգելուած են։

Պատգամաւորների ժողովում Կրիսպին յայտարարեց, որ խռովութիւն բարձրացնողները խաղաղութեան բարեկամ ընկերութիւններն են եղել։ Այդ տեղի տուեց սօցիալիստ Հօստի բողոքին։ Հինգշաբթէ նշանակուած է Բօնգիի առաջարկի քննութիւնը, որ վերաբերում է կառավարութեանը վստահութիւն և հաւատ յայտնելու, որ նա կարող կը լինի առաջիկայ անկարգութիւնների առաջըն առնելու։

ՀՌՈՄ. — Կարդինալ Լեդօխովսկու մահուան լուրը հերքւում է։ Բանից դուրս է գալիս, որ մեռնողը կարդինալ Պեսրան է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Ներքին գործերի մինիստրութեան կարգադրութեամբ «Минута» թերթի հրատարակութիւնը երեք ամսով դադարեցրած է։

Խմբագիր-հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Բաթումի քաղաքային վարչութիւնը փետրվարի 13-ին մրցակցութեան աճուրդ է նշանակել կապալով տալու համար Ա) Սարի-Սուի քաղաքային հաւաքածուի վերանորոգութիւնը — 3,219 ր. 68 կ. արժէքով։

Բ. Բաթումի Պետերբուրգեան փողոցի մի մասի և Արտուինեան բաղնիքի կարգի ձգելը ու սալայատակելը—5,574 ր. 49 կ. արժէքով։

Գ. Բաթումում հաւաքածուի ամբողջ նաւեր սարքելու համար բէլսեռ մնացածների շինութիւնը—1,346 ր. 40 կ. արժէքով։ Աճուրդները կ'սկսուեն ժամը 12-ից։

—

Ալեքսանդրօպոլի ոստիկանական վարչութեան մէջ փետրվարի 13-ին աճուրդով (երեք օրից յետոյ կրկնաճուրդով) պիտի տրուի Ալէքսանդրօպոլի քաղաքային կէսերքը՝ սոյն թուականի օգոստոսի 20-ից սկսած, երեք տարի ժամանակով։ (ա)

—

Կովկասեան նահանգական ինտենդանտային վարչութիւնը փետրվարի 27-ին աճուրդ (առանց կրկնաճուրդի) է նշանակել Թիֆլիսեան միթերանոցի համար (вещевой складъ) հարկաւոր եղած 765 մեծ արկղ, 3000 միջակ արկղ և 219 հատ փոքր արկղ և կապելու համար 108,598 արշին հաստ թել և 83,366 արշին բարակ թել, նոյնպէս և 10 օղաւ փաթաթելու թուղթ և 2000 արշին փաթաթելու քաթան պատրաստելու կապալը։ Արկղները ու թելերը հանձնեն Թիֆլիսի միթերանոցի կառավարչի պահանջմունքի պէս, որ հարկաւոր կը լինի, իսկ մնացածները 4 ամսուայ ընթացքում՝ պայմանը կապելուց յետոյ։ Պայմանները կարելի է տեսնել նոյն վարչութեան մէջ. աճուրդը լինելու է նոյն տեղը։ (բ)

«Նոր-Դար»-ի Օրացոյց.

1889 թ. Ք.	Յունվար 31 օր.	ՏՅԶԱ Հայկ. թ.

31 Երեքշաբթի. բձ. Առաջ. պահի բ. օրը։
Արացի 24-ը. Լուսնի 12-ը. Ն. Տ. փետրվարի 12-ը։

Փետրվար 28 օր

1 Չորեքշաբթի. բէ. Առաջ. պահի գ. օրը։
Արացի 25-ը. Լուսնի 13-ը. Ն. Տ. փետրվարի 13-ը։ Մինչև թուով փետրվարի մէջ գիշերը 13 ժամ է տևում, ցերեկը—10 ժամ։ Արևը ծագում է 7 ժ., մայր է մտնում 5 ժ. 28 վ., օրը երկարում է մօտ 1 ժ. 22 վ.

2 Հինգշաբթի. գձ. Առաջ. պահի գ. օրը. Ռուսաց Տեառնընդառաջ։
Արացի 26-ը. Լուսնի 14-ը. Ն. Տ. փետրվարի 14-ը.
1827 թ. Նիկոլայ Պաւլովիչ կայսրը Ներսէս եպիսկոպոսին (Ներսէս V) գոհունակ հրովարտակ է գրում Հայոց ազգի մասին։

3 Ուրբաթ. գէ. Առաջ. պահի և. օրը։ Յիշատակ Յօնան մարգարէի։ Նորին Կայսերական Բարձրութիւն Նիկոլայ Կօնստանդինովիչի ծնունդն է և ս. Աննայի ատրկեսական նշանի տօնը։
Թիֆլիսի ս. Սարգիս եկեղեցու տօնն է։
Արացի 27. Լուսնի 15. Ն. Տ. փետրվ. 15.

4 Շաբաթ. գձ. Ս. Սարգիս զօրավարի, նրա որդու՝ Մարտիրոսի և նրան չորս զինուորների տօնն է։ Թիֆլիսի ս. Սարգիս եկեղեցու տօնը։
Ծն. Ն. Կ. Բ. Մեծ Իշխանուհի Վերա Կօնստանդինովնայի։
Արացի 28. Լուսնի 16. Ն. Տ. փետրվ. 16.
Լրումն լուսնի. Խառնակ եղանակ, (անձրև զուգակում են ցրտերին և չոր)։
286 թուին այս օրը չարչարւեցին Գրիգոր Լուսաւորչին։

5 Կիրակի. գէ. Ծնն. յետոյ Դ. կիր.
Արացի 29. Լուսնի 17. Ն. Տ. փետրվ. 17.
Արևը ծագում է 6 ժ. 56 վ.-ին, մայր է մտնում 5 ժ. 32 վ.

6 Երկուշաբթի. ոձ. ս. Առաքելեան զօրավարների. Մարկոս եպիսկոպոսի, Պիոն քահանայապետի, Կոդրատ և Բենիամին սարկաւագների և Արդիւսէս, Որմզդան և Սայէն ս. վկաների տօնը։
Արացի 30. Լուսնի 18. Ն. Տ. փետրվ. 18.
1858 թ. վախճանուեց կոմս Յովհաննէս Լազարեանը, որ 43 տարի վարեց Լազարեան ճեմարանի հոգաբարձութեան պաշտօնը։

7 Երեքշաբթի. ոէ. ս. Սուքիասեան վկաների տօնը։
Հայոց Մեհեկան ամսի 1-ը. Լուսնի 19. Ն. Տ. Փետրվարի 19.
Արևը ծագում է 6 ժ. 53 վ., իսկ մայր է մտնում 5 ժ. 36 վ.
1676 թուի փետր. 6-ին ծնուեց Մխիթար Սեբաստացին՝ Մխիթարեան միաբանութեան հիմնադիրը։
1771 թ. Պօլսիմում մեծ հրդեհ եղաւ և այրուեց Հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցին։

Պօստային կառքերի երթևեկութիւն ռազմավիրական ճանապարհի վրայ մինչև 1889 թ. մայիսի 15-ը։

Թիֆլիսից դուրս է գալիս

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը՝—առաւօտեան 8 ժ., գիշերում է Մլէթի կայարանում. Վլադիկաւկազ հասնում է միւս օրը երեկոյեան 8 ժամին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը՝—ցերեկուայ 4 ժ., առանց գիշերելու, Վլադիկաւկազ հասնում է միւս օրը երեկոյեան 7 ժ.

Վլադիկաւկազից դուրս է գալիս

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը՝—առաւօտեան 8 ժ. գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիս հասնում է միւս օրը 8 ժ., ճաշից յետոյ։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը՝ — ճաշից 30 վայրկեան անց, առանց գիշերելու. միւս օրը հասնում է Թիֆլիս երեկոյեան 9 ժ. 50 վ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՉԳԱԽԺԵԱՅ

ՈՏՔԻ ԿՕՇԻԻ ՍՊԵՂԱՆԻ

Ա. ԲԷՐԳՀՕԼՑԻ

Ոտքի ամեն տեսակ կոշտ և եղունգ մի քանի օրուայ մէջ ոչնչացնելու համար։ Ծախւում է շատ դեղատներում և դեղային ու ձգախմային մագազիններում։ Գլխաւոր դեղօն—Նեւսկայա դեղատուն, Անիչկովի կամրջի մօտ Պետերբուրգ։

М. 50—17

ՍԵՐՄԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱ…

Է. ԻՄՄԵՐԻ ԵՒ ՈՐԴ…

ՄԱՏԱԿԱՐԱՐ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱ… ՄԵԾՈՒԹԵԱՆ ՊԱԼԱՏԱՆ

Մոսկվա, Մեասնիցկայա, ս. Օրեն… Նոյն. բառ պահանջման ապարկ… բանջարանոցի, ծաղկանոցի և ա… ասյին ծաղիկների սերմերի հարա… պատկերազարդ ցուցակ, 35 կ. մ… կայ առանձին։

(М.) 15—…

ՍԱԼՕՄԷ ՅՈՎՍԷՓԵԱՆ ԱՆԱՆԵԱՆՑՆ ԵՒ ԻՒՐ ՈՐԴԻՆԵՐՆ Ո… ԱԳՋԻԿԸ ցաւով սրտի իրենց բարեկամներին և ծանօթներին յայտնում են առաջինն իւր ամուսնու և միւսներն իրենց հօր ՅՈՎՍԷՓ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԱՆԱՆԵԱՆՑԻ մահը, որ տեղի ունեցաւ սոյն յունվարի 28-ին։ Հոգեհանգիստը կատարուելու է երեքշաբթի, յունվարի 31-ին, երեկոյեան ժամը 6-ին, իսկ յուղարկաւորութիւնը կը լինի չորեքշաբթի, փետրվարի 1-ին, ժամը 10½-ին, դէպի Ջրկինենց եկեղեցին, որ գտնւում է Գրիբոեդովսկի փողոցի վրայ։

2—1

ՕՐԱՑՈՅՑ 1889 ԹՈՒԻ

Գինը . . . . 10 կ.
Գումարով . . . 7 կ.

Գիտել՝ Центральная Книжная торговля въ Тифлисѣ.

10—4

ԽԱՐԿՈՎ, „ՌՕՍՍԻԱ“ ՀԻՒՐԱՆՈՑ

Եկատերինօսլաւսկայա փող., քաղաքի կեդրոնում։

Սենեակներ 1 ր.—5 ր. բնակարաններ ընտանիքների համար։ Կառքեր։ Լոգարաններ։ Հեռախօս։ Առաջնակարգ պանդոկ։ Օրինակելի խոհանոց։ Նախաճաշիկը 30 կ.։ ճաշը 60 կ.— 2 ր., ընթրիքը 40 կոպէկով։ Ռուսական և օտարազգի լրագիրներ։ Տեղեկատուութիւն առևտրական անձերի համար։ Կատարեալ հանգստութիւն և անձդիւրութիւն։ Զափաւորգներ։

Յ. Լ. ՐՈՒՖ ՈՐԴԻ

(М.) 26—10

Ռուսիա բերելը և վաճառելը թոյլատրուած է Բժշկական Դեպարտամէնտից.

ԹԻՏԵՆՈՒ ԲԱԼՍԱՄ ԴՕԿ. ԼԵՆԳԻԼԻ.

Արտաքնապէս միայն գործածելու համար.

Գործ է ածւում երեսի և ձեռների մորթը սպիտակացնելու համար։

Շատ կեղծումների պատճառով, խնդրում եմ ուշ դարձնել այստեղ տպագրած զգուշացուցիչ մարկի վրայ։

Պատրաստելու ձևը

Այս Բալզամը պատրաստելու միջոցին գլխաւոր ուշադրութիւնը դարձրած է այն բանի վրայ, որ նրա բաղադրութիւնների մէջ բացառապէս մտնեն այնպիսի նիւթեր, որոնք վատ ներգործութիւն չանեն մորթի վրայ, և ընդ հակառակը բարերար և թարմացուցիչ ներգործութիւն անեն երեսի և ձեռների մորթի վրայ։

Գինն է՝ մի սրուակը 1 ր. 65 կոպ. ԲԻՆԶՕԵՎԻ ՕՃԱՌ 35 կ. և 50 կոպ. մի կտորը. ՕՊՕ-ՊՕՄԱԴԸ (կօլդ-կրէմից առաւել) 1 րուբ.։

Ճանապարհածախսը՝ եւրոպական Ռուսիա —70 կոպ., ասիական—1 րուբ.։

Գլխաւոր պահեստն ամբողջ Ռուսիայի համար Վ.՝ Աւրիխի մօտ, Պետերբուրգում՝ Կօլօկօլնայա 18—19։

Գտնւում են Ռուսիայի բոլոր անուշաբոյր նիւթերի և դեղատնային մագազիններում և դեղատներում։

Թիֆլիսում վաճառւում է դեղատնային ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան, Վ. Գրիվնակի, Գ. Ա. Պօպովի, Մ. Մարտիրոսովի և Ա. Պօպովի մօտ։

(М.) 31—6

Дозволено цензурою. Тифлисъ, 30-го Января 1889 г. Տպարան Կովկաս լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова.